# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻԶ. ՏԱՐԻ ԹԻՒ 29 (1279) ՇԱԲԱԹ, ՕԳՈՍՏՈՍ 26,2006
VOLUME 26, NO. 29 (1279) SATURDAY, AUGUST 26, 2006

Պաշտօնաթերթ՝ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


**ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ**

## ՔՄԱՅՔՆԵՐՈՒ ՏԱՐԱՓ ՄԸ, ՈՐ ՄԱԿ-Ը ԱՆԵԼԻ ՄԱՏՆԵԼԷ ԱՒԵԼԻ՝ ՄՈՒԹ ԱՄՊԵՐ ԿԸ ԿՈՒՏԱԿԷ ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐԿՆԱԿԱՄԱՐԻՆ ՎՐԱՅ

*ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ*

12 Յուլիսին արշաւանքով Իսրայէլի նախաձեռնած կործանարար պատերազմը Լիբանանի Հըզպալլահի դէմ, առանց մէկ գրաւոր պայմանագրութեան, հրադադարով մը զսպուեցաւ Օգոստոս 11-ին, ՄԱԿ-ի ազդու միջամտութեամբ: Հրադադարի պայմանները նախագծուեցան յաջորդող օրերուն, մօտաւորապէս հետեւեալ կարգով. Լիբանանի կառավարութիւնը եւ ՄԱԿ-ը 15.000-ական զօրք պիտի առաքեն դէպի Հարաւ, հսկելու համար Իսրայէլի հիւսիսային սահմաններուն ապահովութեան, ընդդէմ՝ Հըզպալլայի, այսպէս կոչուած, «ահաբեկչական գործողութիւններուն»: Երկրորդ՝ Հըզպալլահի կողմէ առեւանգուած երկու զինուորները պիտի վերադարձուին Իսրայէլի: Երրորդ՝ հիմնականը՝ զինաթափել Հըզպալլան:

Հրադադարէն անցած են աւելի քան տասներմէկ սպասողական օրեր, եւ տակաւին յստակ անգամ չէ, թէ ինչպէ՞ս, ե՞րբ, եւ ի՞նչ վերջնական իրաւասութեան սահմաններու մէջ, ՄԱԿ-ի խաղաղարար ուժերը պիտի նախաձեռնեն իրենց առաքելութեան եւ էջք պիտի կատարեն Լիբանանի Հարաւը:

Լիբանան, ոչ ամբողջականօրէն, այլ մասնակի ուժերու տեղադրումներ կատարեց իր հարաւի սահմանները, սակայն շուտով դադրեցուց, շատ հաւանաբար անդրադառնալով կացութեան գահավէժ ընթացքին եւ զուցէ, այդ իսկ պատճառաւ, որ նաեւ, իրմէ կ'ակնկալուի Հըզպալլան զինաթափելու խիստ երկսայրի վտանգաւոր աշխատանքը:

Տակաւին յստակ անգամ չէ, թէ ո՞վ պիտի գլխաւորէ ՄԱԿ-ի ուժերը:

Ֆրանսա որ, ի՛նքն էր ՄԱԿ-ի ուժերու Հարաւ ուղղարկման բանաձեւը ծրագրողներէն եւ ներկայացնողներէն մին, եւ հետեւաբար իրմէ կ'ակնկալուէր աւելի քան հազար հոգինոց զօրք՝ Լիբանանի մէջ կայք հաստատած Ֆինիլի ուժերուն մէջ գտնուող իր 200-ը կրկնապատկեց պարզապէս:

Իտալիա պատրաստ է 2000-ով մասնակցիլ ՄԱԿ-ի խաղաղարար առաքելութեան, պայմանաւ, որ Իսրայէլ քաշուի Լիբանանէն, ամբողջապէս:

Եւրոպական երկիրներ, իրենց կարգին, կ'երկմտին իրենց մասնակցութիւնը բերելու, շատ հաւանաբար յստակութեան պակաս մը տեսնելով խաղաղարար ուժերէն ակնկալուած առաքելութեան մէջ:

*Շար.ը էջ 18*

## ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ՆԱԽԱՐԱՐԸ ԿԸ ՀԵՐՔԷ ԹՐՔԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

*Լիբանանի կառավարութեան անդամ, վարչական բարեկարգումներու նախարար Ժան Օղասապեան հերքեց Թրքական մամուլին մէջ լոյս տեսած այն տեղեկութիւնները, թէ ինք համաձայնութիւն յայտնած է Լիբանանի մէջ տեղակայուելիք ՄԱԿ-ի ուժերուն Թրքական զօրքի մասնակցութեան: Միաժամանակ, Նախարարը իր զարմանքը յայտնեց Հ.Յ. Դաշնակցութեան պաշտօնաթերթ «Ազդակ»-ի կողմէ Թրքական թերթի տեղեկութեան շահագործումին կապակցութեամբ:*

*Այս առթիւ հրապարակուած յայտարարութեան մէջ Նախարար Օղասապեան կ'ըսէ.- «Շաբաթ, 19 Օգոստոս 2006ի Թուակիրով, լիբանանահայ «Ազդակ» օրաթերթը կը հաղորդէր Թրքական «Հիւրրիէթ» օրաթերթէն քաղուած լուր մը, Լիբանանի վարչապետ Ֆուատ Սինիորայի եւ Թուրքիոյ արտաքին գործոց Նախարար Ապտալլահ Կիւլի միջեւ երեւակայածին եւ իրականութեան չհամապատասխանող զրոյցի մը մասին, «Եունիֆել»-ի ուժերուն մէջ Թրքական զօրքին Ներառումին շուրջ, որուն իբրեւ թէ մասնակցած եմ նաեւ ես:*

*«Կ'ուզեմ շեշտել եւ վստահեցնել, որ «Հիւրրիէթ»-ի մէջ լոյս տեսած յօդուածը ոչ մէկ ձեւով կը համապատասխանէ իրականութեան: Ոչ ես, ոչ ալ մէկ ուրիշ պաշտօնակատար մաս կազմեցին անոնց առանձնազրոյցներուն, ինչպէս նշած է Թրքական օրաթերթը, որմէ անմիջապէս քաղած էր իր տեղեկութիւնը «Ազդակ«-ը:*



**Լիբանանահայ նախարար Ժան Օղասապեան**

*«Այս առիթով կը փափաքիմ յստակացնել, որ միշտ նախընտրած եմ իմ տեսակէտներս պարզել Նախարարաց խորհուրդի նիստերուն, որովհետեւ համոզուած եմ, որ ան յարմարագոյն եւ ամէնէն ճիշդ վայրն է»:*

*Նախարար Օղասապեան կ'աւելցնէ թէ, Թրքական ուժերու տեղադրման զգայուն հարցը սակարկութիւններու եւ շահարկումներու շրջածիրէն պէտք չէ ծառայէր եւ ինք՝ առանց որեւէ կաշկանդումի,*

*Շար.ը էջ 4*

## ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԳՈՐԾԻՉԻ ԿԱՐԾԻՔՈՎ ԱԶԱՏ ԵՒ ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ՊԷՏՔ Է 2,5 ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐ

*Հայաստանի մէջ ազատ եւ արդար ընտրութիւններ կատարելու համար անհրաժեշտ է ընդամէնը 2,5 միլիոն տոլար: Օգոստոս 23-ին կայացած մամուլի ասուլիսի մը ընթացքին նման կարծիք յայտնեց ընդդիմադիր «Ազգային Ժողովրդավարներու Դաշինք« (ԱԺԴ) կուսակցութեան Նախագահ եւ Ազգային Ժողովի պատգամաւոր Արշակ Սադոյեան:*

*Սադոյեան տեղեկացուց որ, այս Նպատակով Կուսակցութիւնը պատրաստած է յատուկ ծրագիր մը ու զայն ներկայացուցած՝ Հայաստանի մօտ ԱՄՆ-ի դեսպան Ճոն Էվընզին եւ միջազգային կազմակերպութիւններու՝ ԵԱՀԿ-ի, ՄԱԿ-ի, ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալութեան (USAID), ուշադրութեան, որոնք, ընդհանուր առմամբ, ողջունած են այդ ծրագիրը:*

*Առաջարկուող ծրագիրը Ամերիկայի դեսպանի ներկայացուած է նկատի առնելով որ, ընտրութիւններու պատշաճ մակարդակով կազմակերպման համար Միացեալ Նահանգները Հայաստանին յատկացուցած է 6,5 միլիոն տոլար:*



**ԱԺԴ կուսակցութեան նախագահ Արշակ Սադոյեան:**

*Ծրագիրը կ'առաջարկէ ընտրութիւններու ընթացքին քուէարկութեան ու արդիւնքներու էլեկտրոնային վերահսկողութիւն, քուէաթերթիկներու արտասահմանի մէջ տպագրութեան ապահովում, վստահուած անձերու, տեղական դիտորդներու եւ ընտրական յանձնաժողովներու անդամութեան մօտ 25 հազար թեկնածուներու համար ուսուցման*

*Շար.ը էջ 4*

## ԴԵՍՊԱՆ ՌԻՉԸՐՏ ՀՈԿԼԸՆՏԻ ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆԸ՝ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7-ԻՆ

*Սեպտեմբեր 7-ին Միացեալ Նահանգներու Ծերակոյտի արտաքին յարաբերութիւններու յանձնախումբը դարձեալ օրակարգի վրայ ունի Հայաստանի մօտ Միացեալ Նահանգներու Նոր դեսպան Ռիչըրտ Հոկլընտի թեկնածութեան հարցը եւ կ'ակնկալուի որ այդ օրը տեղի ունենայ քուէարկութիւն:*

*Ռիչըրտ Հոկլընտի թեկնածութիւնը առաջարկուած էր Նախագահ Ճորճ Պուշի կողմէ անցեալ Մայիսի վերջերուն: Յանձնախումբի կողմէ կատարուած լսումներու ընթացքին ծերակուտականներէն ոմանք պահանջած էին Հոկլընտէն, յստակ ձեւակերպել իր դիրքորոշումը Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ: Անոնք նաեւ հարց բարձրացուցած էին, թէ ինչո՞ւ ետ կանչուած էր Հայաստանի մօտ ԱՄՆ-ի դեսպան Ճոն Էվընզ, որ ճանչցած էր Հայոց Ցեղասպանութիւնը:*

*Օգոստոս 1-ին Հոկլընտի թեկնածութեան քննարկումը յետաձգուած էր, յաւելեալ տեղեկութիւններ ստանալու համար թեկնածուի մասին:*

*Սեպտեմբերի 7-ին յանձնախումբի անդամները պէտք է վերջնական որոշում կայացնեն թեկնածութեան վերաբերեալ: Մեծամասնութիւնը կողմ քուէարկելու պարագային, հարցը կը ներկայացուի Ծերակոյտի ընդհանուր ժողովի հաստատման:*

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏՈՒԵԱԼՆԵՐՈՎ, ԱՂՔԱՏ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ 34,6 ՏՈԿՈՍԸ

*Հայաստանի մէջ աղքատութեան ցուցանիշը պարզելու Նպատակով թէեւ Նոր հետազօտութիւն չէ կատարուած, սակայն, Ազգային Վիճակագրական Ծառայութեան պետ Ստեփան Մնացականեան Օգոստոս 22-ին ներկայացուց 2004 թուականի ցուցանիշը, ըստ որու, աղքատ կը նկատուի Հայաստանի բնակչութեան 34,6 տոկոսը:*

*Պրն. Մնացականեանի համաձայն, Համաշխարհային Դրամատան աջակցութեամբ տակաւին վերլուծման տակ են 2005 թուականի ցուցանիշները, որոնց հնարաւոր կ'ըլլայ ծանօթանալ լաւագոյն պարագային 2007-ի սկիզբը:*

*Միաժամանակ, ան յայտնեց, որ սպառողական զամբիւղը փոփոխութիւններ կրած է. հիմա արդէն սպառողական զամբիւղի մէջ ներգրաւուած է ոչ թէ 400, այլ 470 տեսակ ապրանք, եւ այսօրուայ միջին գիներով հաշուարկելու պարագային մէկ մարդու նուազագոյն կենսաապահովման բիւջէն կը կազմէ ամսական 33 հազար 154 դրամ (Մօտ 75 տոլար):*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# ՊԱՏՐԱՍՏԷՔ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

*ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի ելոյթը 1998 թուականի ՀՀ անվտանգութեան խորհրդի հանրայայտ նիստում, որը տպագրուել է Տէր-Պետրոսեանի նոր ժողովածուում եւ մամուլում, շատ ու շատ ընթերցողների շրջանում իսկապէս շոկ է յարուցել: Նրանք, ովքեր կարդացած չեն եղել Տէր-Պետրոսեանի «Պատերազմ, թէ խաղաղութիւն. լրջանալու պահը» յօդուածը, ԱԽ նիստի ելոյթը թերթում կարդալուց յետոյ փնտռել գտել են յօդուածը եւ ընթերցել: Եւ խմբագրութիւն զանգահարած առնուազն մի քանի ընթերցողներ իրենց զարմանքն են արտայայտել, թէ ինչու 1997 թուականին իրենք ականջալուր չեն եղել այն զգուշացումներին, որոնք դրուած են Տէր-Պետրոսեանի յօդուածի մէջ: Իհարկէ, շատերը դրանում ոչ անհիմն մեղադրում են այն ժամանակուայ իշխանութիւններին, որոնք կորցրել էին կապը ժողովրդի հետ եւ իրենց ասելիքը տեղ հասցնելու պրոբլեմ ունէին: Բայց սրանից իրերի դրութիւնը չի փոխւում, եւ մանաւանդ ԼՂ հարցի շուրջ վերջին զարգացումներից յետոյ ժամանակի անիմաստ կորստեան զգացողութիւնը շատերին է համակել: Չնայած սա կեղծ զգացողութիւն է, որովհետեւ խնդիրը ոչ թէ ժամանակի կորուստն է, այլ այն, որ այսօր էլ քաղաքական ասպարէզում գտնուող ոչ մի ուժ ամբողջական եւ համակարգուած պատասխան չի տալիս այն հարցերին, կամ աւելի ճիշդ՝ մարտահրաւէրներին, որոնք արտայայտուած են Տէր-Պետրոսեանի ելոյթում ու յօդուածներում: Աւելի ճիշդ կը լինի ասել՝ այն գլոբալ մարտահրաւէրներին, որ կանգնած են Հայաստանի առաջ: ԼՂ հարցում, օրինակ, ազգային համաձայնութեան դաշտ մթնոլորտ է տիրում, եւ ընդդիմադիր լաւագոյն դրսեւորումը այն տեսակէտն է, թէ Քոչարեանը ԼՂ-ն դուրս մղեց բանակցային ֆորմատից, եւ հիմա Ղարաբաղին պէտք է վերադարձնել բանակցային սեղանի շուրջ: Բայց այս մօտեցումը ընդամէնը երեսպաշտութիւն է: ԼՂ-ն մինչեւ 1998 թուականը եղել է բանակցութիւնների սեղանի շուրջ, եւ ասենք՝ հիմա էլ նրան վերադարձնում ենք ու երեք տարի յետոյ ունենում մօտաւորապէս այն վիճակը, ինչ ունեցել ենք 1997 թուականին. ի՞նչ է լինում յետոյ: Իրականում, խնդիրը ոչ թէ բանակցային ձեւաչափի մէջ է, այլ աշխարհայեացքային մի շատ կարեւոր նրբութեան, որ բխում է հարցի լուծման փուլային եւ փաթեթային տարբերակներից: Առաջին տարբերակի կողմնակիցները գտնում են, որ հարցը պէտք է ժամ առաջ լուծել, ու քանի որ այս պահին հնարաւոր չէ Ղարաբաղի անկախութեան արձանագրումը, այդ խնդիրը պէտք է յետաձգել՝ առաջնային համարելով երաշխաւորուած խաղաղութեան հաստատումը եւ հայ-տորպէյճանական յարաբերութիւնների հաստատումը: Այս խաղաղութիւնը անհրաժեշտ է յանուն երկրի տնտեսութեան, որը, ի հեճուկս Վարդան Օսկանեանի, չի կարող ռէալ զարգացում ունենալ առանց կոմունիկացիաների բացման: Իսկ այս խնդիրը լուծելու համար՝ բացի ԼՂ հարցի փուլային կարգաւորման գնալուց, անհրաժեշտ է Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչումը հանել ՀՀ արտաքին քաղաքականութեան օրակարգից եւ Թուրքիայի հետ գնալ բարիդրացիական յարաբերութիւնների հաստատման: Սա հարկաւոր է անել ժամ առաջ, քանի դեռ չի կառուցուել Կարս-Ախալքալաք երկաթուղին, եւ Հայաստանը մնացած տարածաշրջանային ծրագրերից դուրս մնալուց յետոյ գոնէ երկաթուղային հանգոյց լինելու հնարաւորութիւն ունի: Իսկ հարեւանների հետ նորմալ յարաբերութիւնների հաստատումը, տնտեսութեան զարգացումը, փոխադարձ կախուածութեան ապահովումը պետական անվտանգութեան միակ եւ լաւագոյն երաշխիքն է: Իհարկէ, այս գաղափարները հիմա հանրութեան շրջանում պոպուլար չեն, պոպուլար չէին նաեւ 1997 թուականին: 1997 թուականի եւ այսօրուայ իրավիճակները, իհարկէ, տարբեր են, բայց ունեն նաեւ ընդհանրութիւններ: Այն ժամանակ կար նախագահ, որն այս գաղափարների մասին բաց եւ յստակ խօսելու կամք դրսեւորեց, բայց չկար այդ ասելիքը լսելու պատրաստ հանրութիւն: Այսպէս ասած, յաղթողական ուժերի միարժէք ֆիասկոն եւ 1998 թուականի իշխանափոխութեանը հետեւած ու մինչեւ օրս շարունակուող իրադարձութիւնները հանրութեանը պատրաստել են այսօրինակ խօսակցութեան, բայց հիմա էլ այդ ասելիքը հանրութեանը համակարգուած ձեւով ներկայացնողը չկայ: Համակարգուած ներկայացումը կարող է տեղի ունենալ միայն ու միայն քաղաքական գործունէութեան միջոցով, երբ այդ ասելիքը հետեւողականօրէն բացատրուի մարդկանց: Այս աներկբայ ելակէտը շատ-շատերին ստիպում է արձանագրել, որ Լեւոն Տէր-Պետրոսեանի՝ ակտիւ քաղաքականութիւն վերադառնալու իսկական ժամանակն է: Շատ-շատերը համոզուած են, որ մարդիկ այսօր կը լսեն Տէր-Պետրոսեանին եւ կը հասկանան նրան: Ու այսօր տարբեր մարդիկ տարբեր առիթներով առաջին նախագահին համոզում են մտնել ակտիւ քաղաքական ասպարէզ, քանի որ ժողովուրդը սպասում է նրա այդ քայլին: Տէր-Պետրոսեանը, սակայն, չի շտապում արձագանքել այսօրինակ կոչերին, որովհետեւ գիտի, որ ժողովրդի անունից կարող է խօսել միայն ժողովուրդը: Եւ ուրեմն, ինչպէ՞ս ստուգել՝ ժողովուրդը պատրա՞ստ է լսել եւ ընդունել նրան, թէ՞ ոչ: Եթէ Տէր-Պետրոսեանը ընդառաջ գնա այսօր իրեն արուող առաջարկներին, պէտք է սկսի այցելել մարզեր, յետոյ Երեւանում հանրահաւաք հրաւիրի: Շատ-շատերը համոզուած են, որ այսպիսի հանրահաւաքին կը մասնակցի 100-150 հազար մարդ: Բայց Տէր-Պետրոսեանի առաւելութիւնն այն է, որ նա պրագմատիկ քաղաքական գործիչ է եւ չի կարող հիմնուել անապացոյց համոզմունքների վրայ: Եւ ուրեմն, ո՞րն է այս իրավիճակի ելքը:*

*Գոյութիւն ունի շատ պարզ լուծում. Տէր-Պետրոսեանին ժողովուրդը պէտք է ընդունի ոչ թէ «գեղեցիկ աչքերի», այլ նրա գաղափարների, աշխարհայեացքի համար: Եւ եթէ ժողովուրդը ընդունում է այն գաղափարները, որ նա ունի, նշանակում է՝ ընդունում է նաեւ նրան: Ուստի Տէր-Պետրոսեանին քաղաքական ասպարէզ վերադառնալու կոչող ուժերը պէտք է ոչ թէ նրան համոզեն, այլ համախմբուեն օրուայ նրբութիւններին համարժէքօրէն ձեւակերպուած եւ թարմացուած գաղափարների շուրջ եւ այդ գաղափարներով գնան դէպի ժողովուրդը, ասել է թէ՝ զբաղուեն ակտիւ քաղաքական գործունէութեամբ: Եւ եթէ այդ գործունէութիւնը կը յաջողուի, Տէր-Պետրոսեանին համոզելու կարգի չի էլ լինի: Դեռ 2004-ին «Ջուարթնոց» օդանաւակայանում իր տուած հարցազրոյցում Տէր-Պետրոսեանը իր հնարաւոր վերադարձի մասին լրագրողի հարցին պատասխանելիս ասել էր, որ դրա համար անհրաժեշտ է ակտիւ հասարակական պահանջ, ասենք, օրինակ՝ 50 հազար միտինգաւորների տեսքով: Ու այս ընթացքում քաղաքական ոչ մի համախոհ ուժ չաշխատեց այսքան միտինգաւոր ունենալու ուղղութեամբ: Բոլորը Տէր-Պետրոսեանին համոզում են, որ ինքը 100 հազար միտինգաւոր ունի, եւ անհրաժեշտ է միայն, որ նրանց կոչ անի գալ հրապարակ: Բայց եթէ Տէր-Պետրոսեանը 100 հազար միտինգաւոր ունի, հարց է ծագում. միտինգում նրա կողքին կանգնելու յաւակնութիւն ունեցողների անելիքը ո՞րն է. Տէր-Պետրոսեանի վերցրած իշխանութիւնից փայ ստանա՞լը եւ նրան ու երկիրը նորից նոյն կոտրած տաշտակի առաջ կանգնեցնե՞լը: Ի վերջոյ, պէտք է հասկանալ, որ խնդիրը միայն իշխանութիւն վերցնելը չէ, միայն միտինգ անելը չէ, այլ կուռ, գաղափարապէս եւ մոտիվացիաների իմաստով նոյնական քաղաքական թիմ ունենալը, որը կը կարողանայ ստանձնել այն պատասխանատուութիւնը, որ մեծ հաշուով մինչեւ հիմա էլ դրուած է ՀՀ առաջին նախագահի ու նրա մէկ-երկու համախոհների ուսերին: Կարճ ասած, խնդիրը ոչ թէ Տէր-Պետրոսեանին համոզելու մէջ է, այլ նրա ճանապարհը պատրաստելու: Իսկ այդ ճանապարհը պատրաստելու գործը բոլոր նրանցն է, ովքեր կարծում են, որ Տէր-Պետրոսեանը պէտք է վերադառնայ ՀՀ իշխանութեան ղեկին: Աւելի ճիշդ, այդ գաղափարն ու գաղափարախօսութիւնը պէտք է վերադառնայ: Եւ ուրեմն, դա ոչ այնքան Տէր-Պետրոսեանի ճանապարհն է, որքան Հայաստանի փրկութեան ճանապարհը: Բայց, քաւ լիցի, փրկութիւնը ոչ թէ Տէր-Պետրոսեանն է, այլ այն գաղափարաբանութիւնը, որի հետ մեր իրականութեան մէջ նոյնացւում է նրա անձը: Եւ փրկութեան ճանապարհը պատրաստելու համար հարկաւոր է գնալ ոչ թէ Տէր-Պետրոսեանի, այլ նրան իշխանութեան բերած ու հնարաւոր է՝ նրանից խռոված ժողովրդի մօտ:*

***Ն.Փ.***
***«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»***

# ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ՉԳԻՏԵՆ, ՈՐ ՄԵՐՆ ՈՒՐԻՇ Է

*Հայաստանի հասարակական տարբեր շերտերը խանդավառութեամբ ընդունեցին Ջորջ Բուշի վարչակազմի որոշումը, համաձայն որի Միացեալ Նահանգները պէտք է պայքարեն տարբեր երկրների կոռումպացուած պաշտօնեաների դէմ, ովքեր թալանում են սեփական երկիրն ու ժողովրդին: Այդ տեղեկութեան Հայաստանում առաջացրած խանդավառութիւնն ակնյայտ էր, նոյնիսկ այն պարագայում, երբ շատերը ձգտում էին թաքցնել այդ ոգեւորութիւնը: Մինչդեռ ոգեւորութիւնը թաքցնելու կարիք ամենեւին չկայ: Իսկապէս ուրախալի է, որ ի դէմս Նահանգների, ասենք հայ հասարակութիւնը ստացաւ կոռուպցիայի դէմ պայքարի բաւական ամուր զինակից: Միւս կողմից էլ կարծես թէ ոգեւորութիւնն աւելորդ է, քանի որ Նահանգները իրենց որոշումը կայացնում են սեփական քաղաքական հաշուարկի համաձայն եւ ակնյայտ է, որ ինչպէս բոլոր միջազգային հարցերում, այս դէպքում էլ խօսքը գնում է ընդամէնը քաղաքականութեան գործիքի մասին: Եւ պէտք չէ հետագայում մեղադրել Միացեալ Նահանգներին, եթէ այն, օրինակ, թոյլ տա այդ երկիր այցելել Հայաստանի որեւէ նախարարի: Այնպէս որ Նահանգներն ու հայ հասարակութիւնը զինակիցներ կը լինեն միայն այն դէպքում, երբ դա պահանջի Նահանգների շահը: Մնացեալ դէպքում ինքներս ենք ստիպուած պայքարել մեր երկրում առկայ կոռուպցիայի դէմ: Բայց գուցէ այդ հարցում մեր անզօրութեան գիտակցումն է, որ ստիպում է ոգեւորուել ԱՄՆ քայլից, այն իմաստով, որ կարծում ենք, թէ մեր չկարողացածը, գուցէ Նահանգները կը կարողանան անել: Սակայն անգամ այդ առումով հայ հասարակութեան սպասումը ռացիոնալ չէ:*

*Լաւ չեն ճանաչում Նահանգները մեր պաշտօնեաներին: Լաւ չեն ուսումնասիրել նրանց աշխարհագրական նախասիրութիւնները: Բուշի վարչակազմը պէտք է լաւ իմանայ, որ այդ ամէնը ուղղակի ձեռքի հետի բան է: Եւ հայ պաշտօնեաների ոտքը կտրելով կոռուպցիայի քայլքը Հայաստանում չի դանդաղի, քանի որ կոռուպցիան հայ պաշտօնեայի ոտքի հետ կապ չունի:*

***ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ***
***«ԼՐԱԳԻՐ»***

***ՄԱՍԻՍ*** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**
**Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

ԼՈՒՐԵՐ

## ՎԻԿՏՈՐ ԴԱԼԼԱՔԵԱՆ. «ԲԱՐԳԱՒԱՃ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՉ ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆ Է, ՈՉ ԷԼ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»



Աժ պատգամաւոր Վիկտոր Դալլաքեան

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Վիկտոր Դալլաքեանը, որը վերջերս դիմում է ներկայացրել «Արդարութիւն» դաշինքից դուրս գալու մասին, «Ազատութիւն» ռադիոկայանին տուած հարցազրոյցում վստահեցրեց, որ ինքը «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան անդամ չէ. «Ընդամէնը, որպէս Ազգային Ժողովի պատգամաւոր, որը երեք անգամ անընդմէջ ընտրուել է մեծամասնական ընտրակարգով, ես իրաւունք ունեմ տնօրինելու իմ սեփական ճակատագիրը»:*

*Թէեւ, ինչպէս պատգամաւորն է նշել, իրեն «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնից որեւէ առաջարկ դեռ չի եղել, այնուամենայնիւ նա չի թաքցնում իր համակրանքը այդ կուսակցութեան նկատմամբ: Նրա խօսքերով, «Բարգաւաճ Հայաստան»-ը ոչ ընդդիմութիւն է, ոչ էլ իշխանութիւն կամ իշխանամէտ, որովհետեւ «իշխանութիւնը ձեւաւորւում է ընտրութիւնների միջոցով, եւ այդ պարագայում դառնում են կամ իշխանութիւն, կամ ընդդիմութիւն», իսկ «Բարգաւաճ Հայաստան»-ը դեռեւս որեւէ ընտրութեան չի մասնակցել:*

*«Իմ քաղաքական ընտրութիւնը կը լինի այնպիսին, ինչպիսին պահանջում է ժողովրդի շահը, եւ ես իմ համեստ հնարաւորութիւնները կ'օգտագործեմ մեր երկիրը բարգաւաճ երկիր դարձնելու համար»,- յայտարարեց Դալլաքեանը:*

*Խօսակցութիւնների առնչութեամբ, թէ «Բարգաւաճ Հայաստան»-ի իշխանութեան գալու դէպքում Դալլաքեանին սպասում է Ազգային Ժողովի նախագահի պաշտօնը, պատգամաւորը յայտարարեց. «Կարծում եմ, մեր երկրում իւրաքանչիւրը պէտք է լինի իր տեղում: Առաջիկայ խորհրդարանական եւ նախագահական ընտրութիւնները հնարաւորութիւն են տալիս, որպէսզի համապատասխան քաղաքական գործիչները յայտնուեն իրենց արժանի տեղերում»:*

## ՀՐԱՆԴ ԽԱՉԱՏՐԵԱՆ. «ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆՆ ԻՐ ՇԱՐՔԵՐԸ ՄԱՐՏՈՒՆԱԿ ՎԻՃԱԿԻ Է ԲԵՐՈՒՄ»

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Ընդդիմադիր բոլոր կուսակցութիւններն այսօր ակտիվօրէն աշխատում են մարզերում, գիւղական համայնքներում, ճշդում իրենց անդամների եւ յատկապէս «մարտունակ» անդամների թիւը, մի խօսքով, պատրաստւում են «զօրահաւաքի»: Այս մասին յայտարարեց*

*«Արդարութիւն» դաշինքի անդամ, «Սահմանադրական իրաւունք միութիւն» (ՍԻՄ) կուսակցութեան նախագահ Հրանդ Խաչատրեանը այսօր «Փաստարկ» ակումբում կայացած հանդիպմանը:*

*Ըստ Խաչատրեանի, թէեւ ընդդիմադիր կուսակցութիւնները պայքարի յատուկ ծրագիր դեռեւս չունեն կամ գուցէ այդ մասին դեռեւս չեն ցանկանում բարձրաձայնել, ամէն դէպքում, նախնական երկու սցենար է նախանշւում՝ երկրում իրավիճակի փոփոխութիւն մինչեւ ընտրութիւնները, ինչը, թերեւս, նշանակում է յեղափոխութիւն իրականացնել, յետոյ մասնակցել ընտրութիւններին, եւ, առաջինի չստացուելու դէպքում, այդ փոփոխութիւնների իրականացումը 2007 թուականի ընտրութիւնների ընթացքում:*

*Հերթական ընտրութիւնները, Հրանդ Խաչատրեանի ձեւակերպմամբ, անցնելու են «պատերազմական իրավիճակում», եւ հաշուի առնելով այս հանգամանքը՝ ընդդիմադիր կուսակցութիւններն իրենց շարքերը «մարտունակ» վիճակի են բերում:*

*«Մարտունակ» բառը նա օգտագործում է ընդդիմադիր կուսակցութիւնների այն անդամների վերաբերեալ, ովքեր պէտք է ընդգրկուեն ընտրական յանձնաժողովներում: «Նախորդ փորձից ելնելով՝ նրանք պէտք է տիրապետեն նաեւ գլադիատորի որոշ յատկանիշների, որպէսզի կարողանան դիմադրել: Մենք նախայարձակ լինելու մտադրութիւն չունենք, ես զինուած պայքարի կոչ չեմ անում, բայց մարդիկ պէտք է մարտունակ լինեն, որպէսզի զինուած կրիմինալին կարողանան դիմագրաւել դատարկ ձեռքերով»,- ընդգծեց Հրանդ Խաչատրեանը՝ աւելացնելով, որ խօսքը նաեւ ֆիզիկական մարտունակութեան մասին է:*

*ՍԻՄ-ի նախագահն աւելի նպատակայարմար է համարում, որպէսզի ընդդիմութիւնը ընտրութիւնների վերահսկողութեան հարցում հանդէս գայ միասնական ճակատով, բայց ընտրութիւններին մասնակցի մի քանի նախընտրական դաշինքներով:*

*Հրանդ Խաչատրեանը նաեւ յայտարարեց, թէ կրիմինալի դէմ պայքարելուց բացի, իրենք փորձելու են անհատապէս աշխատել տարբեր ուժերում եւ ճամբարներում գտնուող ազդեցիկ մարդկանց հետ, ասենք՝ վարչապետի, գլխաւոր դատախազի, նաեւ հանրապետութեան նախագահի հետ, որովհետեւ նրանցից է կախուած ժողովրդի բախտը: Երկրի ղեկավարների հետ անհատապէս աշխատելը, ըստ ՍԻՄ-ի նախագահի, նշանակում է ազդել նրանց խղճի եւ մտքի վրայ՝ փորձելով նրանց հետ պահել իշխանութիւնը ամէն գնով պահպանելու մոլուցքից:*

*Միաժամանակ, ըստ ՍԻՄ-ի նախագահի, իշխանութեան վերարտադրութիւնը մեծապէս կախուած է լինելու ոչ թէ ներքին ջանքերից, այլ արտաքին աշխարհի տրամադրուածութիւնից:*

**Massis Weekly on the Internet**
**www.massisweekly.com**

## ԱՐԱՄ ՍԱՐԳՍԵԱՆ. «ՍՏԵՂԾՈՒԵԼԻՔ ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ՆՊԱՏԱԿՆ Է՝ ԹՈՅԼ ՉՏԱԼ, ՈՐՊԷՍԶԻ ԿՐԻՄԻՆԱԼՆ ԻՐ ՄԷՋ ԲԱԺԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ»



Դեմոկրատական կուսակցութեան ղեկավար Արամ Սարգսեան

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Դեմոկրատական կուսակցութեան ղեկավար Արամ Սարգսեանը յայտարարեց, որ ընտրութիւններից առաջ յատուկ կոալիցիա ստեղծելու շուրջ իրենք այս օրերին քաղաքական խորհրդակցութիւններ են անցկացնում ինչպէս «Արդարութիւն» դաշինքի, այնպէս էլ դաշինքից դուրս գտնուող քաղաքական տարբեր ուժերի հետ:*

*«Փաստարկ» ակումբում կայացած հանդիպմանը Դեմկուսի ղեկավարը յայտնեց, որ ստեղծուելիք կոալիցիայի միջոցով փորձ է արուելու «ընտրութիւններից առաջ փոխել երկրում ստեղծուած իրավիճակը եւ թոյլ չտալ, որպէսզի կրիմինալը իր մէջ բաժանի իշխանութիւնը»:*

*Ըստ Արամ Սարգսեանի, «այսօր երկրում կրիմինալիզացիան ամենաբարձր տեմպերով աճում է, ոչ ոք պատասխանատուութիւն չի կրում երկրում կատարուող սպանութիւնների համար, չբացայայտուած սպանութիւնների համար որեւէ պաշտօնեայ պաշտօնանկ չի արւում»:*

*Դեմկուսի ղեկավարի համոզմամբ, այս ամէնը կրիմինալի կողմից անօրինական սեփականութեան ձեռք բերման հետեւանք է. «Հիմա էլ փորձ են անելու արդէն իշխանութիւնը բաժանել կրիմինալի մէջ, որովհետեւ նրանք, ովքեր անօրինական ճանապարհով ձեռք են բերել այդ ահռելի սեփականութիւնը, հիմա պէտք է ձեռք բերեն իշխանութեան ամենամեծ կտորը»:*

*Դրան, Սարգսեանի խօսքերով, նպաստում է այսօրուայ իշխանական բուրգը, որը «այս համակարգը ստեղծել է եւ այդ համակարգի գլխաւորն է»:*

## «ՆԱԻՐԻՏ»-Ը ՎԱՃԱՌՒՈՒՄ Է ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆԸ

*Հայաստանի կառավարութիւնը իր այսօրուայ նիստում թոյլատրել է «Հայգազարդ»-ին 40 միլիոն դոլարով վաճառել «Նաիրիտ» ընկերութեան իրեն պատկանող 90 տոկոս բաժնեմասը «Ռայնովիլ փրոփերթի լիմիթեդ» բրիտանական կազմակերպութեանը:*

*Միաժամանակ «Հայգազարդ»-ը ձեռք է բերում «Նաիրիտ-2» ընկերութեան 100 տոկոս բաժնեմասը՝ 13 միլիարդ 600 միլիոն դրամով:*

*Ըստ կառավարութեան մամլոյ ծառայութեան՝ բրիտանական ընկերութիւնը խոստացել է «անհրաժեշտ ներդրումային ծրագիր իրականացնել»:*

*«Նաիրիտ»-ը, որը Խորհրդային Միութիւնում սինթետիկ կաուչուկ արտադրող միակ ձեռնարկութիւնն էր, անկախութեան տարիներին ձեռքից ձեռք է անցել մի քանի անգամ: Սկզբում Հայաստանի կառավարութիւնը այն վաճառել է «Ռանսատ» բրիտանա-հնդկական ընկերութեանը, յետոյ «Նաիրիտ»-ի սեփականատէրն է դարձել Հայաստանի դրամատներից մէկը, այնուհետեւ դրա կառավարումը յանձնուել է «Վոլգաբուրմաշ» ռուսաստանեան ընկերութեանը: Ի վերջոյ, «Նաիրիտ»-ի բաժնետոմսերի մեծ մասը յայտնուել է «Հայգազարդ»-ի ձեռքին:*

## ԲՋՋԱՅԻՆ ԿԱՊԻ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ԹԻՒԸ 700 ՀԱԶԱՐ Է

*Հայաստանում բջջային կապի բաժանորդների թիւը 700 հազար է: Այդ են վկայում ռուսաստանեան IKS-consulting գործակալութեան՝ ԱՊՀ-ում հեռահաղորդակցութեան ոլորտի զարգացման հետազօտութեան արդիւնքները:*

*«Կովկասպրես» գործակալութեան փոխանցմամբ, Վրաստանում բջջային կապից օգտւում է 1,9 միլիոն, Ատրպէյճանում՝ 2,9 միլիոն մարդ:*

*Ըստ IKS-consulting-ի, Ռուսաստանում բջջային կապի բաժանորդների թիւը 140 միլիոն է, Ուկրաինայում՝ 35,9, Ղազախստանում՝ 6,6 եւ Բելառուսում՝ 5 միլիոն: Ուսումնասիրութիւնը ցոյց է տուել, որ տարեսկզբից ԱՊՀ-ի երկրներում բջջային կապի բաժանորդների թիւը աւելացել է 21 տոկոսով:*

## ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԲՆԱԿՒՈՒՄ ԵՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԵԱՄԲ ԿԱՆԱՅՔ

*ԵՐԵՒԱՆ, «ԼՐԱԳԻՐ»: Ինչպէս յայտնի է, 2005թ. Հոկտեմբերի 18-ից 27-ը Լեռնային Ղարաբաղում անցկացուեց մարդահամար: ԼՂՀ Ազգային Վիճակագրական Ծառայութիւնը հրապարակել է մարդահամարի վերջնական արդիւնքը, որի համաձայն մշտական բնակչութեան թուաքանակը հանրապետութիւնում կազմել է 137737 մարդ (որից 48.3 տոկոսը՝ տղամարդիկ - 51.7 տոկոսը՝ կանայք), այդ թւում՝ քաղաքային բնակչութիւնը՝ 70512 մարդ ( 47.0 տոկոսը՝ տղամարդիկ, 53.0 տոկոսը՝ կանայք), գիւղականը՝ 67225 մարդ (49.7 տոկոսը՝ տղամարդիկ, 50.3 տոկոսը՝ կանայք): Մշտական բնակչութեան թուաքանակն ըստ շրջանների կազմել է. Ստեփանակերտ քաղաքում՝ 49986 մարդ, Ասկերանի շրջանում՝ 16979 մարդ, Հադրութում՝ 12005 մարդ, Մարտակերտում՝ 18963 մարդ, Մարտունիում՝ 23157 մարդ, Շահումեանում՝ 2560 մարդ, Շուշիում՝ 4324 մարդ, Քաշաթաղում՝ 9763 մարդ:*

*Հետաքրքիր է, որ բառացիօրէն մի քանի տարի առաջ Ղարաբաղի բնակչութիւնը կազմել է 145 հազար մարդ: Իսկ մինչ Շարժումը՝ 189 հազար:*

## ԼՈՒՐԵՐ

# ԵԱՀԿ ՄԻՆՍԿԻ ԽՈՒՄԲԸ ԾՐԱԳՐՈՒՄ Է ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ

*ԵՐԵՒԱՆ, «ԼՐԱԳԻՐ»:* Հայաստանը որեւէ նոր առաջարկ չի ստացել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներից: Օգոստոսի 21-ին պատասխանելով լրագրողների հարցերին այդ մասին յայտարարել է ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանեանը: Նա նշել է, որ նոր առաջարկների միշտ էլ կարելի է սպասել, բայց ներկայ դրութեամբ այդպիսիք չկան: Ջնայած ատրպէյճանական մամուլը եւ որոշ պաշտօնեաներ նշում են, թէ Սեպտեմբերին համանախագահները կը կազմակերպեն նախագահների հանդիպում եւ կը ներկայացնեն նոր առաջարկներ, Հայաստանի արտգործնախարարն ասում է, որ առայժմ խօսքն ընդամէնը նախարարների հանդիպում անցկացնելու մասին է, որի կոնկրետ ժամկէտը դեռ նոյնիսկ չի էլ որոշակիացուած:

Վարդան Օսկանեանը նաեւ անդրադարձել է Ղարաբաղի ու Ատրպէյճանի Ջինուժի շփման գծում, ԼՂՀ վերահսկողութեան տակ գտնուող տարածքներում հրկիզումների մասին ատրպէյճանական յայտարարութիւններին: Հայաստանի արտգործնախարարը ասել է, թէ զարմանում է հարցը չահարկելու Ատրպէյճանի մղումից, քանի որ խօսքը ընդամէնը չոգի պատճառով առաջացած հրդեհների մասին է: Վարդան Օսկանեանը նշում է, որ այդպիսի հրդեհներ լինում են գրեթէ իւրաքանչիւր տարի, պարզապէս 2006 թուականին դրանց ծաւալն աւելի մեծ էր: Նախարարը ասել է, թէ մի քանի ժամ առաջ է կապուել ԼՂՀ ղեկավարների հետ, որոնք հաւաստիացրել են, որ հրդեհներ իհարկէ կան, սակայն դրանք չեն սպառնում որեւէ բնակավայրի:

«Դրանք բնական հրդեհներ են եղել, որոնց ծաւալն այս տարի մի քիչ շատ է, հայկական կողմի հնարաւորութիւններն էլ սահմանափակ, դրա համար էլ մի քիչ բարդութիւններ են եղել», ասում է Վարդան Օսկանեանը:

Վարդան Օսկանեանը զարմանք է յայտնել հարցը ՄԱԿ տեղափոխելու Ատրպէյճանի ցանկութեան կապակցութեամբ: Նա նշում է, որ պէտք է խնդրին առաւել գործնական մօտեցում ցուցաբերել: Վարդան Օսկանեանը չի կարողանում հասկանալ, թէ այդ հարցի հետ ինչ կապ ունի ՄԱԿ-ը, առաւել եւս որ նոյնիսկ ԵԱՀԿ գործող նախագահի զեկոյցն է ամրագրում այդ հրդեհների ոչ միտումնաւոր լինելու փաստը: Վարդան Օսկանեանը դրական է վերաբերում հրդեհները հանգեցնելու համար հայ-ատրպէյճանական գործակցութեան մասին առաջարկին, որ ցանկանում է Հայաստանին ուղղել Էլմար Մամեդեարովը: Վարդան Օսկանեանը նշել է, որ հայկական կողմը միշտ բաց է եղել ցանկացած գործակցութեան: Հայաստանի արտգործնախարարը յայտարարել է, թէ իր կարծիքով, Ղարաբաղի իշխանութիւնը կ՚ընդունի եւ պատրաստակամօրէն կը գործակցի թէ միջազգային կառոյցների, թէ Ատրպէյճանի հետ, հրդեհները հանգեցնելու համար:

# ԱՆՏՈՆԻՕ ԳՈՒՏԵՐԷՇ. «ՄԵՆՔ ԽԻՍՏ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԱԾ ԵՆՔ ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ԽՆԴՐԻ ԽԱՂԱՂ ԿԱՐԳԱՒՈՐՄԱՄԲ»




ՄԱԿ-ի Փախստականների հարցերով յանձնակատար Անտոնիօ Գուտերէշ

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:* «Մենք փայլուն համագործակցում ենք Հայաստանի կառավարութեան հետ»,- այսօր Երեւանում յայտարարեց ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագոյն յանձնակատար Անտոնիօ Գուտերէշը:

Նա ողջունեց կառավարութեան ջանքերը փախստականների համար կացարանների, ինչպէս նաեւ Հայաստանի հասարակութեանը ինտեգրման պայմանների ապահովման ուղղութեամբ: ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագոյն յանձնակատարը յատուկ գոհունակութիւն յայտնեց Հայաստանում ներգաղթի, այսինքն՝ երկրում ապաստան խնդրող մարդկանց համար օրենսդրական եւ ինստիտուցիոնալ դաշտի ձեւաւորման ուղղութեամբ աշխատանքների առումով: Գուտերէշը նաեւ շնորհակալութիւն յայտնեց Լիբանանից փախստականներին ընդունելու համար:

Ղարաբաղեան կարգաւորման առնչութեամբ ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագոյն յանձնակատարը յայտարարեց. «Թէեւ մենք լիովին ապաքաղաքական կառոյց ենք, այդուհանդերձ, մենք խիստ հետաքրքրուած ենք խնդրի խաղաղ կարգաւորմամբ եւ կարծում ենք, որ համաձայնութիւնները, որոնք հնարաւորութիւն կը տան տեղահանուածներին վերադառնալ իրենց բնակավայրերը, կարող են փոխադարձ վստահութեան ձեւաւորման տարր դառնալ, որը կարող է նպաստել առաջիկայում խնդրի վերջնական կարգաւորմանը»:

Հարցին, թէ քննարկուելո՞ւ է արդեօք Ատրպէյճանում հայ փախստականների թողած գոյքի ու սեփականութեան վերադարձի հնարաւորութիւնը, Անտոնիօ Գուտերէշը պատասխանեց, որ խաղաղ կարգաւորման դրական արդիւնքներից կարող է լինել երկու կողմերի գոյքային իրաւունքների վերականգնումը. «Եթէ քննարկւում է փախստականների վերադարձի տարբերակը, ապա դա կարող է լինել սեփականութեան իրաւունքի վերականգնումը, եթէ վերադարձի տարբերակը չի քննարկւում, ապա դա կարող է լուծուել փոխհատուցման ճանապարհով»:

# ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ՆԱԽԱՐԱՐԸ ԿԸ ՀԵՐՔԷ

*Շարունակուած էջ 1-էն*

կառավարութեան նիստերուն եւ ուր որ գտնուած է յստակօրէն արտայայտած է իր վերապահութիւնները:

Հայ նախարարը նաեւ կոչ կ՚ընէ «Ազդակ» օրաթերթի խմբագրութեան, այսօրինակ աժան քարոզչութեան բեմ չծառայելու, որովհետեւ կ՚ակնկալուէր, որ այս սուտ ու շինծու լուրը նախ ստուգուէր լիբանանեան աղբիւրներէ, փոխանակ աճապարելու եւ յենելու թրքական աղբիւրի մը վրայ եւ ոչ թէ անմիջապէս լոյս ընծայուէր «Ազդակ»-ի առաջին էջին վրայ:

«Թրքական մամուլը շատ յաճախ շինծու եւ անստոյգ լուրեր կ՚արտայայտէ հայ ժողովուրդի մասին, որոնց մէջ նաեւ՝ Դաշնակցութիւն կուսակցութեան մասին: Ի՞նչ էր օգուտը «Ազդակ»-ի արձագանգելու նմանօրինակ ստայօդ յօդուածի մը, որ կրնայ միայն ծառայել մեր հաւաքական պահանջատիրութեան, միասնականութեան կեցուածքին դէմ կասկածանքի ու թունալից մթնոլորտ սերմանումին»,- կ՚եզրակացնէ նախարար Ժան Օղասապեան իր յայտարարութեան մէջ:

### ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԵՐԵՒԱՆԸ ԴԷՄ ՉԷ

Միւս կողմէ Օգոստոսի 21-ին Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան այս հարցի շուրջ իրեն ուղղուած լրագրողի հարցումին պատասխանելով ըսած է, թէ խնդիրը կը վերաբերի Լիբանանին, քանի որ խօսքն այդ երկրի տարածքի մասին է:

«Թուրք խաղաղապահներու տեղակայման համաձայն ըլլալ կամ չըլլալը Լիբանանի գործն է: Լիբանանը դա պէտք է որոշի ինքնակամ, ոչ թէ դրսի պարտադրանքով»,- աւելցուցած է Վարդան Օսկանեան:

# ԱԶԱՏ ԵՒ ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ՊԷՏՔ Է 2,5 ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐ

*Շարունակուած էջ 1-էն*

դասընթացքներ, քարոզչութեան նպատակով ամենօրեայ հեռուստատեսութեան եւ ռադիոհաղորդումներու պատրաստում եւայլն:

Արշակ Սադոյեան համոզմունք յայտնեց, որ ընտրական յանձնաժողովներու անդամութեան թեկնածուներու ուսուցման դասընթացքները, որ կը կազմակերպուի Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովի կողմէ, բացառապէս իշխանութեան թեկնածուներու համար է, իսկ ընդդիմութեան ներկայացուցիչները դուրս կը մնան այդ ծրագիրէն:

Ընդդիմադիր գործիչը վստահ է, որ Հայաստանի իշխանութիւններու համար իր ծրագիրը զսպող հանգամանք կը հանդիսանայ, որպէսզի հանրահաւաքի մասնակիցներուն տասնեակներով չկալանաւորեն:

Սադոյեան յայտնեց նաեւ, որ ծրագիրը վերջնական տեսք կ՚ունենայ Սեպտեմբերին՝ տարբեր քաղաքական ուժերու կողմէ ստացուած առաջարկները ամփոփելէ ետք:

# ՆԵՐԻՇԽԱՆԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄՈՒՆԵՏԻԿԸ

*ԵՐԵՒԱՆ, «ԼՐԱԳԻՐ»:* Զգալի է, որ կը լինի ներիշխանական պայքար: Օգոստոսի 19-ին Ազդակ ակումբում խօսելով գալիք ներքաղաքական զարգացումների մասին այդպիսի կանխատեսում է արել ՀՀԿ Խորհրդի անդամ, ԱԺ պատգամաւոր Գալուստ Սահակեանը: Այդ սպասումը նա պայմանաւորում է ընդդիմութեան լռութեամբ:

«Դա գալիս է նրանից, որ ընդդիմութեան ճամբարը դեռեւս համահաւաք չէ, դեռեւս չեն կարողացել բանակցել, որոշակի սկզբունքներ որդեգրել: Բայց նաեւ ամռանը տեսանելի է որոշակի ակտիւութիւն նաեւ ընդդիմութեան դաշտում: Գործառոյթներն այնպիսին են, որ այսպէս թէ այնպէս, իւրաքանչիւր քաղաքական ուժ ընդդիմութեան դաշտում խնդիր ունի համատեղելու գաղափարախօսութիւնը ուժերի եւ որոշակի ակտիւութիւն է նկատւում», ասում է Գալուստ Սահակեանը: Նա ընդդիմութեան դաշտում նկատուող ակտիւութիւնը կոնկրետացնում է ՀԺԿ օրինակի շնորհիւ: Ըստ Գալուստ Սահակեանի, «լուրջ սկզբունքային որդեգրումներ ունի» նաեւ Ազգային Միաբանութիւնը:

«Նկատելի է ընդդիմադիր դաշտում կուսակցութիւնների համատեղելիութիւնը, եւ կարծում եմ, որ սա ինչքան խորանայ ընդդիմադիր դաշտում աւելի միասնական լինելու ձգտումը, այդքան նպաստաւոր պայմաններ կ՚ստեղծուեն, որպէսզի ընտրութիւններն աւելի օրինական լինեն եւ, այսպէս, անձնաւորուած չլինեն», ասում է Գալուստ Սահակեանը: Եթէ ընդդիմադիր դաշտի պարագայում Գալուստ Սահակեանը չի խուսափում կոնկրետ անուններ նշելուց, ապա ներիշխանական պայքարի իր կանխատեսումը նա չի ցանկանում կոնկրետացնել: ՀՀԿ Խորհրդի նախագահը կարծում է, թէ կը լինի պայքար, սակայն յատկապէս իշխանութեան որ թեւերի միջեւ, Սահակեանը չի նշում:

«Տարբեր թեւերի, տարբեր անձերի, տարբեր մարդկանց: Դեռեւս յեղյեղուկ վիճակում է երեւոյթը, հենց դրա համար էլ ասում եմ, որ քաղաքական բանակցութիւնները կը տեղափոխուեն աշնանը, որովհետեւ ընդդիմութիւնն իր խօսքը այսպէս, թէ այնպէս դեռ չի ասել», նշում է ՀՀԿ Խորհրդի անդամ Գալուստ Սահակեանը:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

## Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

# ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ՝ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ



*Միաբանական համագումարին մասնակցողները*

*Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, ինչպէս նաեւ Հայաստանի եւ սփիւռքի թեմերից ժամանած 65 միաբան հայրեր՝ ծայրագոյն վարդապետներ, վարդապետներ ու աբեղաներ հերթական այս համագումարին քննութեան առին միաբանի՝ որպէս ժողովրդի հովուի, հաւատքի ուսուցչի, քարոզչի, խորհրդատուի, վարիչի առաքելութեանը առնչուող խնդիրներ:*

*Միաբանական համագումարն սկսուեց Տէրունական աղօթքով, որից յետոյ միաբաններին բացման խօսքով դիմեց Գուգարաց թեմի Տաւուշի մարզում փոխառաջնորդ, համագումարի կազմակերպիչ յանձնախմբի անդամ Տ. Սասուն Ծայրագոյն վարդապետ Զմրուխտեանը: Գերապատիւ Հայր Սուրբը, անդրադառնալով ժողովրդի կեանքում առկայ հոգեւոր խնդիրներին եւ Եկեղեցու առջեւ ծառացած մարտահրաւէրներին, հրամայական նկատեց միաբանների առաքելութեան պայմանների վերանորոգումը: Այդ առումով Հայր Սասունը կարեւորեց միաբանական հաւաքների գումարումը, որոնք հնարաւորութիւն են ընձեռում միասնաբար խորհրդածելու հոգեւոր կեանքի խնդիրների շուրջ, վերհաստատելու անվերապահ սէրը հանդէպ Մայր Աթոռի, հաւատարմութիւնը հանդէպ Ամենայն Հայոց Հայրապետի, անսակարկ նուիրումը Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ Հայրենիքի նկատմամբ: Յանուն միաբանութեան վերստին հաստատելով հոգեւոր բանակի զինուորներ լինելու ուխտը՝ Հայր Սուրբը հրաւիրեց Նորին Սրբութիւն Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ Հայրապետական իր պատգամն ու օրհնութիւնը փոխանցելու ներկայ միաբաններին:*

*«Հայրապետիս համար մեծ ուրախութիւն է տեսնել խմբուած Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մեր սիրելի միաբաններին: Գեղեցիկ աւանդոյթ է ձեւաւորւում Մայր Աթոռում, որ ամէն երրորդ տարին մեր միաբանները հաւաքուեն Սուրբ Էջմիածնում՝ իրենց ուխտը վերանորոգելու հանդէպ մեր նուիրական սուրբ կենտրոնը, նաեւ իրար հետ մէկտեղ մի քանի գեղեցիկ օրեր ապրեն, իրենց փորձառութիւնը հոգեւոր եւ հովուական կեանքի մէջ փոխանակեն, իրենց մտահոգութիւնները կիսեն միմեանց հետ, ինչպէս նաեւ իրենց երազներն ու տեսիլքները՝ մեր Եկեղեցու եւ ժողովրդի ապագայի վերաբերեալ...»,- ասաց Վեհափառ Հայրապետը:*

*Նորին Սրբութիւնը հանգամանօրէն անդրադարձաւ Եկեղեցու առջեւ ծառացած խնդիրներին՝ ժողովրդի քրիստոնէական դաստիարակութեանը, ամէնօրեայ քարոզչական, հովուական գործունէութեան առաւել աշխուժացման անհրաժեշտութեանը, հասարակական կեանքից ներս բարոյական առողջ մթնոլորտ ձեւաւորելու առաքելութեանը: «...Այնքան ժամանակ, որքան մենք չյաջողենք այս առաքելութեան լիարժէք իրագործման մէջ, այնքան ժամանակ արատաւոր երեւոյթները ուղեկիցը կը լինեն մեր կեանքի, այնքան ժամանակ Աստծուց հեռացուած կը լինի հայորդին եւ Աստծոյ պատգամներն ու պատուիրանները չէ, որ առաջնորդող կը լինեն իր կեանքում»,- նշեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:*

*Խօսելով միաբանի կոչման,*

*Շար.ը էջ 18*

# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ՝ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴԵԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԻԹՈՎ



*Վեհափառ Հայրապետի տարեդարձի արարողութենէն տեսարան մը*

*Օգոստոսի 21-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդեան 55-ամեայ տարեդարձի կապակցութեամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարուեց Հայրապետական մաղթանք: Արարողութեանը ներկայ էին Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմակալ առաջնորդներ, բարձրաստիճան եկեղեցականներ, Հայաստանի եւ Սփիւռքի բոլոր թեմերից ժամանած եւ վանաբնակ միաբաններ, Մայր Աթոռի պաշտօնէութիւնը եւ բարեպաշտ հաւատացեալներ:*

*Հանդիսաւոր թափօրի ուղեկցութեամբ, Մայր Տաճարի զանգերի ղօղանջների ներքոյ Նորին Սրբութիւնը Վեհարանից ուղղեց դէպի տաճար, ուր Միածնաէջ Մայր Տաճարի Իջման Սբ. Սեղանի առջեւ կատարուեց Հայրապետական մաղթանքի կարգը:*

*Մինչ արարողութիւնը Հայոց Եկեղեցու ողջ հոգեւոր դասի եւ Մայր Աթոռի պաշտօնէութեան անունից Վեհափառ Հայրապետին շնորհաւորանքի ու բարեմաղթանքի խօսք ուղղեց Մայր Աթոռի միաբան Տ. Ներսէս արքեպիսկոպոս Պոզապալեանը: Գերաշնորհ Սրբազանն անդրադարձաւ Վեհափառ Հօր գործունէութեանը՝ ընդգծելով նրա մեծագոյն աւանդը հոգեւոր դասի երիտասարդ սերնդի պատրաստման, ինչպէս նաեւ ժողովրդի քրիստոնէական դաստիարակութեան գործում: «Վեհափառ Տէ՛ր, այսօր Ձեր ծննդեան տարեդարձն է, եւ մենք բոլորս հաւաքուել ենք այս սուրբ խորանի՝ աստուածային տեսլեան այս փառաւոր կենտրոնի առջեւ՝ աստուածային սիրոյ էջքի վայրում: Եւ այստեղ, որպէս 132-րդ Հայրապետի, Ձեր շուրջը հաւաքուած ասում ենք. «Քահանայք քո զգեցցին զարդարութիւն եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն»: Այս հոգեւորականները՝ քահանաները, եւ այս ժողովուրդը՝ զգեցած արդարութեան սուրբ խորհուրդը, հաւաքուել են, որպէսզի Դուք նմանուէք այն քահանայապետին, որ Մելքիսեդեկ կոչուեց, եւ աղօթում են առ Բարձրեալն Աստուած, որ շարունակէք ցուպը ձեռքին առաջնորդել մեր ժողովրդին»,- ասաց Սրբազան Հայրն իր խօսքում՝ շնորհազարդ Հայրապետին մաղթելով արգասաւոր գահակալութեան երկար քաջառողջ տարիներ, անսպառ ուժ եւ կորով՝ ի բարօրութիւն հաւատաւոր հայ ժողովրդի եւ ի պայծառութիւն Հայաստանեայց Սուրբ Եկեղեցու:*

*Հոգեպարար աղօթքի վերջում Վեհափառ Հայրապետն իր գոհունակութիւնը յայտնեց, որ կեանքի 55-րդ տարեդարձին շրջապատուած է տեսնում իրեն հոգեւոր դասով, Մայր Աթոռի պաշտօնէութեամբ եւ հաւատացեալ բարեպաշտ ժողովրդի բազմութեամբ եւ իր գնահատանքն ուղղեց նրանց՝ իրենց անձնուէր ծառայութեամբ ու աշխատանքով եւ աղօթական կեանքով Հայաստանեայց Եկեղեցու առաջընթացին ու բարգաւաճմանը նպաստելու համար: Նորին Սրբութիւնն իր խօսքում նաեւ մաղթեց. «Մենք, Իջման Սուրբ*

*Շար.ը էջ 18*



## ՔԱՂԱՔԱԿԱՆ

# ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԹՆՃՈՒԿԸ

*ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ*

*Շատ կը սխալի Ամերիկայի Միացեալ Նահանգներու արտաքին գործերու գործակատարը երբ կ'ըսէ թէ Իսրայէլ-Հըզպալլա-Լիբանան ընդհարումէն, սկսած Յուլիս 12ին եւ տակաւին բուռն կերպով շարունակուող, կրնայ նոր Մերձաւոր Արեւելք մը ծնիլ: Նոյնը կը մտածէ անշուշտ իր մեծաւորը, նախագահ Ճորճ Պուշ, երբ կը պնդէ թէ դժուարութիւններէն նոր պատեհութիւններ կրնան ծնիլ: Այս մէկը կրնար շիտակ ըլլալ եթէ Ամերիկան ստանձնէր «պարկեշտ միջնորդ»ի (honest broker) դերը, ոչ միայն այս նորագոյն պատերազմի ընթացքին, այլ 1948էն ի վեր ստեղծուած արաբ-իսրայէլեան տագնապի ընթացքին: Փաստօրէն, եւ ինչ պայմաններ ալ ստեղծուին, Ամերիկա կողմ է, եւ անշուշտ, իր դաշնակից Իսրայէլի կողմն է: Իբրեւ պետութիւն, մանաւանդ իբրեւ բանակ, Իսրայէլ իր գոյութիւնը կը պարտի Ամերիկայի Միացեալ Նահանգներուն: Պատկերացուցէք որ Իսրայէլեան բանակի պլիտճէն, ըստ երեւոյթին, Փենթակոնէն կը ճշդուի, իրողութիւն որ կը փաստէ թէ որքան Ամերիկան եւ Իսրայէլը կապուած են իրարու: Անշուշտ, այդ պլիտճէին եւ անոր ընկերացող պատերազմական բոլոր զէնքերու դիմաց, հրասայլ, օդանաւ, զէնք, զրահ եւայլն, նոյնիսկ հաւանօրէն այդ օդանաւները գործածող օդաչուներն ալ, ուրեմն այս բոլորին դիմաց, Իսրայէլ մեծ ծառայութիւններ կը մատուցանէ Ամերիկային, յատկապէս լրտեսական մարզէն ներս:*

*Այս պայմաններու տակ, ուրեմն, դժուար է պատկերացնել թէ ինչ նոր Մերձաւոր Արեւելք կրնայ ծնիլ Լիբանանի եւ Կազայի մոխիրներէն: Աւելին կարելի է ըսել, որ Հըզպալլան եւ Համասը, եւ այլ ահաբեկչական կոչուած խմբաւորումներ, նկատի ունինք Իրաքի կացութիւնը, ուղղակի արդիւնք են ամերիկեան միակողմանի եւ փրօ-իսրայէլեան քաղաքականութեան:*

*1948ին ոչ Հըզպալլա, ոչ Համաս եւ ոչ ալ միջազգային ահաբեկչական խումբեր գոյութիւն ունէին, եթէ անշուշտ չյիշենք հրէական «Իրկունը» եւ սիոնիստական շարժումը:*

### Ի՞ՆՉ Է ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ՆԵՐԿԱՅԻՍ

*Լիբանանի Հարաւը, Հըզպալլայի եւ Իսրայէլի միջեւ տեղի ունեցող պատերազմէն, ի՞նչ եզրակացութիւններ կարելի է հանել, Լիբանանի եւ որոշ չափով Իսրայէլի հասցուած քանդումներէն եւ զոհերէն անդին:*

*Առաջին առիթով, ընթացիկ տագնապի լոյսին տակ, անվարան կը հաստատուի Իրանեան տուեալը Մերձաւոր Արեւելեան թատերաբեմէն ներս: Շիտակ է որ Իրան միշտ ալ գտնուած է հակա-իսրայէլեան դիրքերու վրայ, եւ սակայն, մանաւանդ Իրանի նոր նախագահի արտայայտութիւնները ոչ մէկ կասկած չեն ձգեր այդ մասին: Եթէ իրապէս ճիշդ է որ Իրան կը գտնուի Հըզպալլայի ետին, տնտեսապէս, եւ մանաւանդ իբրեւ հայթայթիչ Հըզպալլայի արձակած հրթիռներն, եւ դեռեւս ալ զինուորական խորհրդատուներուն կասկածէ դուրս է որ Իրան յետ այսու ռազմավարական լուրջ դեր մը կոչուած է խաղալու շրջանէն ներս: Ամերիկայի, Իսրայէլի, եւ մանաւանդ Սիւննի կրօնի արաբական աշխարհին համար, այլեւս կասկածի առարկայ չի կրնար ըլլալ Իրանի տրամադրութիւնը: Անվիճելի փաստը այսօր այն է որ արաբական բոլոր բանակներէն աւելի, Շիի կրօնքի պատկանող «միլիցիա» մը, Հըզպալլան, առանձինը կը յաջողի պատերազմի իջնել, եւ տոկալ, աշխարհի ամենէն զօրաւոր բանակներէն մէկուն դէմ:*

*Երկրորդ հաստատումը այս վերջին ողբերգական զարգացումներու լոյսին տակ այն է որ մասնակի լուծումներով, հիմնական հարցը չի լուծուիր: Վերջին տարիներուն, մանաւանդ 2000 թուականէն ասդին, Իսրայէլ, Ամերիկայի քաջալերութեամբ որոշ «զիջումներ» կատարեց, զիջումներ որոնք, եթէ Իսրայէլի պարգեւեցին որոշ շահեր կամ առաւելութիւններ միջազգային գետնի վրայ, քաղաքական իմաստով, սակայն դիմացի կողմէն, Իսրայէլի Լիբանանէն եւ Կազայէն քաշուիլը որեւէ ձեւով չնպաստեց հիմնական հարցի լուծման: Հարց է հիմա թէ արդեօ՞ք Իսրայէլ կը յաջողի, ինչպէս ինք կը պնդէ, ամբողջական յաղթանակ ապահովել Հըզպալլայի դէմ, ինչ որ կասկածելի կը թուի ներկայիս: Այս պայմաններու տակ, խիստ անհաւանական կը թուի Իսրայէլի քաշուիլը արեւմտեան ափէն, եւ Կազայէն, եւ ստեղծումը անկախ եւ ինքնիշխան պաղեստինեան պետութեան մը: Աւելի քան երեք միլիոն պաղեստինցիներ կը բնակին այդ շրջաններու մէջ, եւ*

*Շար.ը էջ 19*

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ՝ ԳԱՆԱՏԱ

***ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ***
***(Զոհ՝ Իսրայէլի բարբարոսական յարձակման՝ Լիբանանի ժողովուրդին)***

*Սոյն յօդուածին շարադրանքը զուգադիպեցաւ Լիբանանի վրայ բարբարոսական վերջին յարձակման, որուն Իսրայէլեան արդարացումը «չարիքի արմատ» Հըզպալլահի ոչնչացումն է: Անմարդկայնօրէն վայրագ իսրայէլցի ղեկավարները կը սխալին սակայն, խորհելով որ իրենց գերակշիռ օդային ուժով Լիբանանը քարուքանդ ընելով կրնան Հըզպալլան ծունկի բերել: Որովհետեւ, Հըզպալլան իր ազգային-կրօնական գաղափարաբանութեամբ ու նպատակներով Լիբանանի միայն յատուկ կազմակերպութիւն չէ, այլ կը մարմնացնէ արաբ ժողովուրդներու ազատագրական պայքարը, Իսրայէլի բռնագրաւիչ ախորժակներուն եւ կայսերապաշտական լուծին դէմ արաբական մարտնչող ոգին, որ օրէ օր աճելով ու զօրանալով պիտի ըլլայ անպարտելի բանակ, մինչեւ որ իսրայէլցի ղեկավարները խելքի գալով պարտաւորուին արդար հիմերու վրայ ու խաղաղութեամբ ապրիլ իրենց արաբ դրացիներուն հետ:*

*Անմարդկային այս պատերազմը Լիբանանի քանդումով չի վերջանար: Լիբանանի խաղաղ եւ անմեղ ժողովուրդը ջուրի եւ ելեքտրականութենէ զրկելով, ճամբաներ ու կամուրջներ, ժողովրդային շէնքեր ու տուներ քանդելով Հըզպալլան չի ջախջախուիր: Իսրայէլցի ղեկավարները անխիղճ ու վայրագ են, բայց ապուշ չեն հաւատալու որ այս միջոցներով արաբ ազատագրական ոգին խորհրդանշող Հըզպալլան կրնան ոչնչացնել: Բայց անոնք կը հաւատան իրենց ըրածին որ հաւասար է բարգաւաճ Լիբանանի ոչնչացման, տնտեսապէս հզօր, համաշխարհային դրամատուներու կեդրոն ու միջազգային թուրիզմի հրապուրիչ երկիր Լիբանանի քանդումին՝ նախանձէ եւ անզօր մրցակցութենէ տարուած:*

*Մեր Գանատա հաստատուիլը բոլորովին պատահականութեան արդիւնք էր: 1988ի վերջերը մեր ընտանիքին Գանատա փոխադրուելէն շուրջ տարի մը առաջ, ժողովի մը առթիւ, արդէն եկեր ու տեսեր էի Մալիս-Յունիսեան Գանատայի կլիման ու սիրած էի, բացի այն անպատեհութենէն որ անակնկալ ու յորդառատ անձրեւներ երբեմն կը խանգարէին դաշտային պտոյտներու ծրագիրները:*

*Այդ տարին, 1989ի վերջին ամիսներուն մանաւանդ, Լիբանանեան պատերազմը նոր թափ եւ նկարագիր ստացեր էր քրիստոնեայ համայնքներու միջեւ ալ բախումներ յառաջացնելով: Պատերազմական վիճակին թէժացումը պատճառ եղաւ որ աւելի մեծ թիւով արտագաղթողներ հեռանան երկրէն: Արտագաղթողներուն մեծ մասը Ամերիկան ու Գանատան նշանակէտ ունենալով, անոնք կ'երթային Կիպրոս՝ վիզայի եւ փոխադրութեանց կարգադրութիւններուն համար, քանի որ, Պէյրութի համապատասխան գրասենեակները կամ փակուեր էին, եւ կամ, վտանգաւոր վայրերու մէկը կը գտնուէին: Առեւտրական կեանքն ալ մեծապէս վատթարացած ըլլալով, ընկերութիւններէն շատեր իրենց պաշտօնէութիւնը նօսրացուցեր էին, կարեւորները միայն պահելով կէս ամսականով: Իսրայէլեան յաճախակի գրգռութիւններն ու յարձակումները ալ աւելի մտահոգիչ հեռանկար մը կը պարզէին: Այս կացութեան մէջ ընտանիքս փոխադրեցի Կիպրոս եւ Լառնաքայի մէջ փոքր յարկաբաժին մը վարձելով քանի մը ամիս վայելեցինք ծովի հաճոյքին հետ նաեւ ծովեզերեայ ճաշարաններուն մասնագիտութիւնը կազմող ծովապտուղները:*

*Լառնաքայի մեր կեցութիւնը իր ծովափնեայ հաճոյքին կողքին ընկերային տեսակէտով ալ հոգեկան գոհունակութիւն կը պատճառէր ինծի, նկատելով որ այդ գողտրիկ քաղաքին մէջ կ'ապրէին այժմ հանգուցեալ լաւ բարեկամներս՝ Հայկաշէն Ուզունեան եւ Կիպրոսի Խորհրդարանի հայ ներկայացուցիչ Արամ Գալայճեան, ինչպէս նաեւ շուկային մէջ անուանի շապկագործ Գրիգոր Յարութիւնեան:*

*Լիբանանէն արտագաղթել ուզող բազմութիւնները ամէն օր, յորձանք առ յորձանք կը հասնէին Լառնաքայի նաւահանգիստը, լծուելու համար երանելի վիզան ձեռք ձգելու աշխատանքին, օրերով ու*

*Շար.ը էջ 19*


**GENERAL CONTRACTOR**

**BID REQUEST**

